ՔԱՆԱՔԵՌԻ ԵՆԹԱԲԱՐԲԱՌԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայերեն բարբառների և խոսվածքների ուսումնասիրությունը առաջնահերթ նշանակություն ունի հայոց լեզվի պատմության պրոբլեմների լուծման, ինչպես նաև ընդհանուր լեզվաբանության համար։ Կուլտուրայի աննախընթաց վերելքի և գրագիտության լայն տարածման հետևանքով բարբառների արագ մահացումը այն զարձնում է առավել անհետաձգելի։

Ուսումնասիրությունից պարզվում է, որ Արարատյան բարբառի Քանաքեռի ենթաբարբառով են խոսում հին Քանաքեռի և Ջրվեժ գյուղի բնակիչները։ Այժմ, երբ նախկին Քանաքեռ գյուղը միացել է Երևանին, Հայաստանի տարբեր շրջանների այլևայլ բարբառների ներկայացուցիչների հետ ունեցած շփումը, ինչպես նաև գրական լեզվի մեծ ազդեցությունը, արագությամբ փոխում են քանաքեռցիների խոսակցական լեզուն, և կարճ ժամանակից հետո անհնարին կդառնա նրա ուսումնասիրությունը։

Ստորև ներկայացնում ենք Քանաքեռի ենթաբարբառի ձևաբանական բնորոշ առանձնահատկությունները։

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Հոգնակիի կազմությունը

Արարատյան բարբառի Քանաքեռի ենթաբարբառում հոգնակին կազմվում է հիմնականում էր, նէր և f մասնիկներով։

էր մասնիկով է կազմվում բոլոր միավանկ բառերի հոգնակին. այսպես՝ կուժ — կրժէր, ճանճ — ճանչէր, հաց — հացէր և այլն։

Գրաբարում վերջնաձայն ն ունեցող բառերում, որոնց վերջին ն-ն խոսվածքում ընկել է, հոգնակի թվում այն պահպանվում է, այսպես. բեռն > պէռ — պէռնէր, գառն > կառ — կառնէր և այլն։ Այս օրինաչափությունից բացառվում է միայն երեք բառ՝ կաթն > կաթ — կաթէր, կամն > կամ — կամէր, որդն > վոռթ — վոռթէր։

Նէր մասնիկով է կազմվում՝ մեկուկէս և բազմավանկ բառերի հոգնակին. այսպես՝ ականջ > անգաջ — անգաջնէր, արջառ > աչառ — աչառնէր, լեզու > լիզու — լիզվընէր, կատու — կատվրնէր և այլն։

Ք մասնիկով կազմվում են.

ա) Հին հայերենում այ երկհնչյունով վերջացող բառերը. (այ-ը երկբարբառային գիրք գրավելով հնչյունափոխվում է է-ի). այսպես՝ երեխայ — երեխայք > ըրէխէք, չուխայ — չուխայք > չուխէք, փեսայ — փէսայք > փէսէք և այլն։

բ) Ի ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը. ինչպես՝ ածելի > առծրլի — առծրլիք, ոսկի > վոսկ'ի — վոսկ'իք, հայելի > հայլի — հայլիք և այլն։

Ծանոթ. — 1. Ընտանիքի, տոհմի, գերդաստանի իմաստ արտահայտող բառերը հոգնակիում ստանում են էնք մասնիկը. ինչպես՝ Ըստեփանէնք, Օքյուղէնք, Նաղաշէնք և այլն։

Ծանոթ. — 2. Այն բառերը, որոնց վերջի ք-ն չի գիտակցվում իբրև հոգնակերտ մասնիկ, հոգնակիում ստանում են նէր մասնիկը. ինչպես՝ բանալի > պըլանիք — պլանիքնէր, մատանի > մաննիք — մաննիքներ, կամ մաննըքնէր և այլն։

Ծանոթ.— 3. Մարդ > մառթ և կին > կընիգ բառերի հոգնակին կազմվում է իք (անիք) մասնիկով, ինչպես՝ մառթ — մառթիք, կընիգ — կընանիք։

Ծանոթ. — 4. Աղջիկ > ախչիգ բառը հոգնակի թվում ունեցած էր մասնիկի հոգնական իմաստի մթագնման հետևանքով ստացել է լրացուցիչ ք հոգնակերտը՝ ախչիգ — ախչրգյէրք։

Վերը նշված սովորական ձևերից բացի, խոսվածքում կան նաև մի քանի այլ հոգնակերտ մասնիկներ, որոնք ընդհանուր գործածություն չունեն. դրանք են՝ ան, անք, վանք, աանք, տինք, օնք:

Հոլովները և նրանց կազմությունը

Քանաքեռի ենթաբարբառն ունի յոթ հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական։

Ուղղական հոլովը ենթակայի հոլովն է։ Սեռական և տրական հոլովներում բառերը, բացի դերանուններից, ունեն միևնույն վերջավորությունը, այն տարբերությամբ միայն, որ տրական հոլովում որոշիչ հոդ են ընդունում, իսկ սեռականում՝ ոչ։ Հայցական հոլովի վերջավորությունը ձևով նման է ուղղական կամ տրական հոլովներին, ըստ որում՝ անձ ցույց տվող որոշյալ առում ունեցող բառերի հայցականը նման է տրականին։ Բացառական հոլովը կազմվում է ից վերջավորությամբ։ Գործիականի վերջավորությունը օվ-ն է, ինչպես գրական հայերենում, իսկ ներգոյականինը՝ ըմ: Ներգոյականի իմաստը մի շարք բառերում արտահայտվում է նաև մէջ ետադրությամբ, որը կազմվում է բառի սեռական հոլովից։

Հոգնակի թվում հոլովական վերջավորությունները նույնն են։

Հոլովում

Ենթաբարբառիս համար հատկանշական են երկու կարգի հոլովումներ՝ արտաքին՝ ի, ու, ան, ա, վա, օշ (օնշ), գ և ներքին՝ օ, ա:

Արտաքին հոլովումներ

Ի հոլովում — Քանաքեռի ենթաբարբառում ևս ի-ն ամենատարածված և կենսունակ հոլովումն է, և բառերի մեծ մասը պատկանում է այդ հոլովման։

Վերջավորություններն են՝ եզակի սեռական-տրական ի, հայցականը ձևով նման է ուղղականին՝ իրի առման դեպքում, և տրականին՝ անձի առման դեպքում. բացառական՝ ից, գործիական՝ օվ, ներգոյական՝ ըմ:

Հոգնակի սեռական-տրական՝ ի, հայցականը ձևով նման է ուղղականին կամ տրականին, բացառականը՝ ից, գործիականը՝ օվ, ներգոյական՝ ըմ:

Ծանոթություն — Անձի առմամբ օգտագործվող բառերը, ինչպես և կենդանիների անունները ներգոյական հոլով չունեն։

Ի հոլովմամբ են հոլովվում հոգնակի թվում բոլոր գոյականները և գոյականաբար գործածված այլ խոսքի մասերը։

Այս հոլովման են պատկանում նաև.

ա) Գրաբարում այ երկբարբառով վերջացող այն բառերը, որոնք ենթաբարբառումս կորցրել են յ ձայնորդը. ինչպես՝ փեսայ > փէսա — փէսի, տղայ > տրղա — տրղի, գուլպայ > գյուլբա — գյուլբի և այլն։

բ) Ու-ով վերջացող բառերը՝ կատու — կատվի, առու — առվի և այլն։

գ) Բոլոր անձնանունները՝ Անուշ — Անուշի, Խոսրով — Խոսրովի, Պէդոս — Պէդոսի և այլն։

գ) Փոխառյալ բառերը՝ դուշմանի, իշտահի, գավալի և այլն։

Հարակատար և ենթակայական դերբայները գոյականաբար գործածվելիս նույնպես հոլովվում են ի հոլովմամբ։

Ու հոլովում — Վերջավորություններ. եզակի սեռական-տրական՝ ու, հայցականը ձևով նման է ուղղականին կամ տրականին, բացառական՝ ուց, գործիական՝ օվ, ներգոյական՝ ըմ:

Հոգնակի սեռական — տրական՝ անց, օնց, ի. բացառական՝ ից, գործիական՝ օվ, ներգոյական՝ ըմ:

Այս հոլովմամբ են հոլովվում.

ա) Ի ձայնավորով վերջացող բառերը. այգի >իք՛ի, հոգի >հոք՛ի, ձի > ծի, գարի > կարի, գինի > կ՛ինի և այլն։

բ) Որտեղացի ցույց տվող բառերը՝ ղարաբախցի, քանաքրոցի և այլն։

գ) Բայի անորոշ դերբայը։

դ) Լուսաւորիչ > լուսավորիչ բառը։

Ան հոլովում — Վերջավորություններ. եզակի սեռական-տրական՝ ան. հայցականը՝ ուղղականի և տրականի նման, բացառական՝ ից, գործիական՝ օվ, ներգոյական՝ ըմ. հոգնակի սեռական-տրական՝ ի. հայցականը՝ ուղղականի նման, բացառական՝ ից, գործիական՝ օվ, ներգոյական՝ ըմ:

Այս հոլովման են պատկանում գրաբարում ն վերջնահանգ ունեցող բառերի մեծ մասը. դուռն > տուռ — տրռան, թոռն > թօռ — թօռան, մուկն > մուկ — մրկան, ձուկն > ծուգ — ծրգան և այլն։

Ա հոլովում — Այս հոլովմամբ են հոլովվում ախչիդ, կընիգ, աստծաձին, Քանաքէռ, Ալափարս բառերը։

Վա հոլովում — Վերջավորություններ. եզակի սեռական-տրական՝ վա, հայցականը՝ ուղղականի նման, բացառական՝ ից, գործիական՝ օվ, ներգոյական՝ ըմ.

Հոգնակի սեռական-տրական՝ ի, հայցականը՝ ուղղականի նման, բացառականը՝ ից, գործիականը՝ օվ, ներգոյականը՝ ըմ:

Այս հոլովմամբ են հոլովվում ժամանակ ցույց տվող բառերը, տարի, ամիս, օր, գիշեր> քըշէր, ցէրէգ, ձմեռն> ծըմէռ, ամառ, աշունք, կարունք (Ուրբաթ բառը հոլովվում է ի հոլովմամբ), ինչպես նաև հմիդ < հիմա բառը։

Ոչ (օնչ) հոլովում — Վերջավորություններ. եզակի սեռական-տրական՝ օչ (օնչ), հայցականը՝ ուղղականի և տրականի նման, բացառական՝ ից, գործիական՝ օվ, ներգոյական՝ ըմ:

Հոգնակի սեռական -տրական՝ ի, հայցական՝ ուղղականի կամ սեռականի նման, բացառական՝ ից, գործիական՝ օվ:

Այս հոլովմամբ հոլովվում են միայն տէր և տանտէր բառերը։

Ց հոլովում — Վերջավորություններ. հոգնակի սեռ.- տրական ց, հայցականը՝ տրականի նման, բացառական՝ ից. գործիական՝ օվ, ներգոյական՝ ում։

Այս հոլովմամբ հոլովվում են ազգակցական կապ, տոհմ, ընտանիք ցույց տվող բառերը։

Ներքին հոլովներ

Ո հոլովում — Այս հոլովման են պատկանում ազգակցություն ցույց տվող մայր > մէր, հայր > հէր, սանամայր > սանամէր, եղբայր > ախպէր, քոյր > ք՚իր, մորաքոյր > մօրք՚իր, ինչպես նաև՝ տայգր > տէքրը, աներ > անէր, սկեսուր >կ՚էսուր բառերը։

Սրանց առանձնահատկությունն այն է, որ սեռական-տրական հոլովները կազմվում են ոչ թե վերջավորությունների հոլովմամբ, այլ վերջնավանկի ձայնավորի վոփոխմամբ։

Ա հոլովում — Այս հոլովմանն են ենթարկվում գրաբարում ութիւն, իսկ խոսվածքում՝ ըթյուն ածանցով վերջավորվող բառերը՝ գողութիւն > կողըթյուն, ուրախութիւն > ուրախրթյուն, մարդութիւն > մառթրթյուն, ինչպես նաև տուն ու շուն բառերը, որոնք իրականում հին հայերենի ներքին ա հոլովման մնացորդներն են ենթաբարբառում։

ՀՈԴ

Քանաքեռի ենթաբարբառում իբրև որոշիչ հոդ գործածվում է ը և ն։ Արդի հայերենի նման ը-ն դրվում է, երբ բառը վերջանում է բաղաձայնով, իսկ ձայնավորով վերջացող բառերն ստանում են ն հոդը։

Բացի սեռական հոլովից, մնացած բոլոր հոլովները կարող են հոդ ընդունել։

Իբրև անորոշ հոդ գործածվում է մի անորոշ դերանունը. այսպես, օրինակ՝ մի աշտարակցի է՚թըմ ա Արա՚րան։ Մի մառթ ու մի կընիգ՚ էն ըլըմ.

Որպես ստացական հոգեր գործածվում են առաջին դեմքի համար՝ ս, իսկ երկրորդ դեմքի համար՝ տ (դ)։

Երբ բառը վերջանում է ձայնավորով, ս, տ ստացական հոդերը դրվում են ձայնավորից անմիջապես հետո, ինչպես՝ ծիս «իմ ձին», հօք՚իս «իմ հոդին», իք՚իս «իմ այդին» և այլն։

Բաղաձայնով վերջացող բառերի հետ ստացական հոդերը միանում են ը ձայնավորով. ինչպես՝ կրլուխրս «իմ գլուխը», մէշկրս «իմ մեջքը», հէրրս «իմ հայրը» և այլն։

Ստացական հոդերը գործածվում են նաև հոգնակի ձևերի հետ՝. օրինակ՝ արնէրրս «իմ աները», ծէոք՚էրրտ «քո ձեռքերը», վօննէրրս «իմ ոտները» և այլն։

ԱԾԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Որակական ածականներն ունեն համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական և գերադրական։

Ածականի դրական աստիճանը նույնն է, ինչ արդի հայերենում։ Օրինակ՝ մէնձ տրղա, կարմիր արէվ, կանանչ տերէվ, խէլքօվ մառթ և այլն։

Բաղդատական աստիճանը կազմվում է հետևյալ եղանակներով. ա) համեմատվող առարկան դրվում է բացառական հոլովով, իսկ ածականը մնում է անփոփոխ։ Օրինակ՝ իմ տրղէն քու ախչրկանիցը մէնձ աւ Մէր իք՛ին ծէր իքուցը լավն ա։

բ) Գործածվում են քանց. քանց թէ շաղկապները ուղղական հոլովով դրված դոյականի հետ. ինչպես՝ Մէր տունը մէնձ ա, քանց ծէրը։ Իմ բրէխէն սիրուն ա, քանց թէ քունը։

գ) Իմաստը սաստկացնելու համար ավելացվում են դրնա, ավէլի բառմասնիկները. այսպես՝ Իմ տրղէն քու ախչրկանիցը դրհա մէնձ ա։ Մեր իքյին ծէր իքուցը ավէլի լավրն ա։

Գերադրական աստիճանը կազմվում է.

ա) Ամէն բառը ածականին կցելու միջոցով. ինչպես՝ Ամէնահաստ փէտը էս ա։ Ամենամէնձ տրղէն էթրմ ա։ Ամէնավադ մառթը տու յէս։

բ) Ամէն բառը, կամ նրան համապատասխան բրբուդի բառը բացառական հոլովով գործածելով. ինչպես՝ Ամէնից մէնձ տրղէն էթրմ ա։ Ամէնից սիրունը պուճուր ախչիդրն ա։ Բրբա՛դնից մէնձ տրղէն տու յէս։ Բրբադնից պանցրը ծառը էս ա։

ԹՎԱԿԱՆՆԵՐ

Քանակական թվականներն են. մէդ, էրկու, իրէք, չորս, հինդ, վէց, օխտը, ութը, ինը, տաս, քըսան, յէռսուն, քառսուն, իցցուն, վացցուն, օխտանասուն, ութանասուն, իններսուն, հարիր, հազար, միլյոն։ Տասնավորից և միավորից կազմված բարդ թվերում տասնավորը նախադաս է լինում։

Տասն > տաս բառի ն-ն բարդությունների մեջ վերականգնվում է, բացառությամբ տասչորս բառի։

Բաղաձայնով սկսվող միավորից առաջ, իբրև հոդակապ, լսվում է ը, ինչպես՝ տասնմէկ > տասնրմէդ, տասներկու > տասնէրկու, տասներեք > տասնիրէք, տասնհինգ > տասնըհինդ, տասնվեց > տասնըվէց, տասնյոթ > տասնօխտ և այլն։

Բացի տասն > տաս բաղադրիչով կազմվածներից, մյուսներում տասնավորի սան, սուն, ցուն խմբերը բարդության մեջ մտնում են անփոփոխ ձևով, ինչպես՝ քըսանմէդ, յեռսունիրէք, քառսունչորս, իցցունիրէք, վացցունօխտը և այլն։

Հարյուրավորները կազմվում են միավորի և հարիւր > հարիր բառի հարադրությամբ. այսպես՝ էրկու հարիր, իրէք հարիր և այլն։

Հարիւր > հարիրը և հազար > հազարը միավորի հետ միանում են առանց հոդակապի. ինչպես՝ հարիր մէդ, հարիր չորս և այլն։

Չափ ցույց տվող թվականները կազմվում են նօց, անօց մասնիկները քանակականներին միացնելով, ինչպես՝ մէդանօց, էրդրսնօց, իրէքանօց, չորսնօց, հրնդանօց։

Ռանաքեռի ենթաբարբարում դասական թվականներ չկան, դրանց փոխարեն օգտագործվում են քանակական թվականները։ Վերջին շրջանում, դրական լեզվի ազդեցությամբ օգտագործվում են յէդրօրթ, յէրօրթ, վէցէրէօրթ և այլն ձևերը։

Բաշխական թվականները կազմում են քանակական թվականների կրկնությամբ, ինչպես՝ մէդ — մէդ, էրկու — էրկու, իրէք՛ — իրէք և այլն։

Բազմապատկական թվականները կազմվում են քանակական թվականների և հէտ բառի հարադրությամբ, այսպես՝ մի հէտ, էրկու հէտ և այլն։

Դ Ե Ր Ա Ն Ո Ի Ն

Անձնական դերանուններն են՝ յէս, տու, նա, ինքը, մէնք, տուք, ընդօնք, իրանք։ Սրանք հոլովվում են այսպես.

ուղղ.	յէս	մէնք	տու	տուք	նա	ընդօնք
սեռ.	իմ	մէր	քու	ծէր	ընդըրտ	ընդօնց
տրակ.	ինձ	մէզ	ք'էզ	ծէզ	ընդըրան	ընդօնց
հայց.	ինձ	մէզ	ք'էզ	ծէզ	ընդըրան	ընդօնց
բաց.	ընձանից	մէզնից	ք'էզանից	ծէզանից	ընդըրանի(ց)	ընդօնցից
գործ.	ընձանով	մէզնով	ք'էզնով	ծէզնով	ընդըրանով	ընդօնցով
ներգ.	ընձանրմ	մէզնըմ	ք'էզանըմ	ծէզանըմ	ընդըրանըմ(ը)	ընդօնցըմ(ը)

ուղղ.	ինքը	իրանք
սեռ.-տրակ. հայց	իրան	իրանց
բաց.	իրանից	իրանցից
գործ.	իրանով	իրանցով
ներգ.	իրանրմ	իրանցըմ (ը)

Ցուցական դերանուններն են՝ էս, էտ, էն, որոնք գոյականի հետ իբրև ածական գործածվելիս չեն հոլովվում, բայց առանձին, որպես ինքնուրույն դերանուն գործածվելիս հոլովվում են։

ուղղ.	էս	էտ	էն	սըրանք	տըրանք	նըրանք
սեռ.-տր.	սըրա(ն)	տրրա(ն)	ընդրրա(ն)	սըրանց	տըրանց	նըրանց
հայց.	էս	էտ	էն	սըրանք	տըրանք	նըրանք
բաց.	սրրանի	տրրանի	ընդրանի	սըրանցի	տըրանցի	նըրանցի
գործ.	սըրանով	տրրանով	ընդրանով	սըրանցով	տըրանցով	նըրանցով
ներգ.	սըրանրմ	տրրանըմ	ընդըրանըմ	սըրանցըմ	տըրանցըմ	նըրանցըմ

Մեզ'էլ, մեզ'ելնէր, էսման, էտման, էնման, ինչպես նաև՝ ըստէղ, ըտէ, ընդէ տեղ ցույց տվող ցուցական դերանունները հոլովվում են ի հոլովման պատկանող գոյականների նման։

Իբրև ստացականներ գործածվում են անձնական դերանունների սեռականները՝ իմ, քու, ընդրրա, իրան, մէր, ծէր, ընդօնց։

Ստացականների հետ հանդես եկող գոյականները միշտ ունենում են ը կամ ն հոգր։

Ստացական դերանունները գոյականաբար գործածվելիս հոդ են ստանում և հոլովվում ի հոլովմամբ։

Ստացական դերանունները կարող են փոխարինվել հոդերով, առաջին դեմքի համար՝ ս, երկրորդ դեմքի համար՝ տ, այսպես՝ իմ հէրը — հէրըս, քու կ'էսուրը — կ'էսուրըտ։

Մէր, ծէր ստացական դերանունների փոխարեն գործածվում է նէրըս, նէրըտ, որոնցից առաջ բաղաձայնով վերջացող բառերի վրա ավելանում է ը, ինչպես՝ իք'ինէրրս «մեր այգին կամ այգիները», աշկընէրրս «մեր աչքերը» և այլն։

Հարաբերական դերանուններն են՝ օվ, վօր, վօրը, ինչը, քանիսը, վօրտէ, վօնց (ինչպես), քանի, ուր, յէփ «երբ», վօրդիյան «որտեղից», որոնցից հոլովվում են միայն օվ, վօրը, ինչը, վօրտէ, քանիսը, մնացածները չեն հոլովվում։

Հարցական դերանուններն են՝ օ՞վ, ի՞նչ, վօ՞րը, քանի՞սը, վօ՞րտէ, վօ՞նց «ինչպե՞ս», քանի՞, ո՞ւր, յէ՞փ «ե՞րբ», վօ՞րդիան «ո՞րտեղից»։

Հարցական դերանունները հոլովվում են հարաբերական դերանունների նման։

Փոխադարձ դերանուններն են՝ իրար, մէգը, մէգ'ի։

Որոշյալ դերանուններն են՝ ամէնքը, մէգ'էլը, մէգ'էլնէրը, ամէն մէգը որոնք հոլովվում են ի հոլովմամբ։

Անորոշ դերանուններն են՝ մինը, ուրիշը։

Ժխտական դերանուններն են՝ ըսկ'ի (ոչինչ), ըսկ'ի դադ (ոչ մի բան), մինն էլա (ոչ մեկը)։

ԲԱ 3

Դերբայներ

Դերբայները Քանաքեռի ենթաբարբառում հետևյալներն են՝ անորոշ, անկատար, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտման։ Բացակայում է ապառնի դերբայը։

Անորոշ դերբայն ունենում է իլ, ալ վերջավորությունները, որոնք գոյականաբար գործածվելիս հոլովվում են ու հոլովմամբ։ իլ վերջավորվող բայերի ի-ն դառնում է է, ինչպես՝ կըրիլ — կրրէլու, ուտիլ — ուտէլու, խըմիլ — խըմէլու և այլն։

Անկատար դերբայը բայի բաղադրյալ ժամանակների մէջ լինում է սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմության բաղադրիչ։ Այն մշտապես ունենում է ըմ և, միայն գալ և տալ բառերում՝ իս վերջավորություններ։

Վաղակատար դերբայի վերջավորությունն է՝ իլ խոնարհման բայերի համար՝ էլ (եալ), իսկ ալ խոնարհման, ինչպես նաև սոսկածանցավոր բայերի համար՝ ացէլ (ացեալ), որոնք բոլորն էլ ավելանում են բայահիմքերին։

Վաղակատար դերբայով և օժանդակ բայերի հարադրությամբ կազմվում են սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակները։

Հարակատար դերբայի վերջավորությունն է՝ իլ խոնարհման համար ած, ալ խոնարհման և սոսկածանցավոր բայերի համար՝ ացած >, ինչպես՝ աղազած, կրրած, խրմած, կրնացած։

Հարակատար դերբայը օժանդակ բայի հարադրությամբ կազմում է սահմանական եղանակի հարակատար ժամանակները։ Այս դերբայը՝ գոյականի վրա դրվելով, օգտագործվում է իբրև որոշիչ։

Ենթակայական դերբայի վերջավորությունն է՝ օղ, ացօղ, որն ավելանում է բայահիմքին. ինչպես՝ պէրօղ, կրնացօղ և այլն։

Իր կազմությամբ ացօղ մասնիկը նույնպես բաղադրված է անցյալի հիմքի աց վերջավորությունից և ենթակայական դերբայի օղ մասնիկից։

Այս դերբայը բայի եղանակային ձևերում հանդես չի դալիս։ Նրա կիրառությունը արդի հայերենի նման է. գոյականաբար գործածվելիս հոլովվում է ի հոլովմամբ։

Ժխտման դերբայը կազմվում է անորոշ դերբայի վերջավորության անկմամբ։ Այն հանդես է դալիս օժանդակ բայերի ժխտական ձևերի հետ և գործածվում է պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտական ձևերի կազմության մեջ։

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բայն ունի հինգ եղանակ՝ սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական և հրամայական։ Սահմանական եղանակն ունի յոթ ժամանակ՝ ներկա, անցյալի անկատար, վաղակատար, անցյալի վաղակատար. հարակատար, անցյալի հարակատար և անցյալ կատարյալ։ Անցյալ կատարյալից բացի, բոլոր ժամանակները կազմվում են դերբայով և օժանդակ բայով։

Օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ էմ, էս, ա, էնք, էք, էն, անցյալինը՝ ի, իր, էր, ինք, իք, ին։

Սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի և անցյալի խոնարհված ձևերով։

Օժանդակ բայի ներկայի և անցյալի խոնարհված ձևերը, միանալով վաղակատար և հարակատար դերբայներին, կազմում են վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար ժամանակներ։

Սահմանական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակների իմաստն արտահայտվում է հարկադրական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների միջոցով. այսպես՝ պրտի էթամ, պրտի էթայի ձևերը նշանակում են գնալու եմ և պիտի գնամ։

Ապառնու իմաստն արտահայտվում է նաև սահմանական եղանակի ներկա ժամանակի միջոցով. ինչպես՝ էքուց էթրմ էմ շրհարը «վաղը դնալու եմ քաղաք»։

Ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներն ունեն ապառնի և անցյալի ապառնի։

Ըղձական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները կազմվում և խոնարհվում են արդի հայերենի ըղձական ապառնի և անցյալի ապառնի ժամանակների նմանությամբ։

Պայմանական եղանակի ապառնին և անցյալի ապառնին կազմվում են ըղձական ապառնուց և անցյալ ապառնուց՝ կը եղանակիչի ավելացումով. ինչպես՝ կ'էփէմ, կ'էփի և այլն։

Հարկադրական եղանակի ապառնին և անցյալի ապառնին կազմվում են ըղձական ձևերին ավելացնելով պրտի եղանակիչը։

Հրամայական եղանակի եզակի թվի վերջավորություններն են՝ ի, ա, իսկ հոդնակիինը՝ էք, ացէք։

Բայն ունի չորս խոնարհում.

Առաջին խոնարհման բայերը անորոշ դերբայում ունեն իլ վերջավորություն. դրանք կազմությամբ պարզ բայեր են. ինչպես՝ պէրիլ, կրրիլ, էփիլ, թագ'իլ «ծեծել», կօդրիլ և այլն։

Երկրորդ խոնարհման պատկանող բայերը անորոշ դերբայում ունեն ալ վերջավորությունը. օրինակ՝ աղալ, ըրէվալ և այլն։

Առաջին խոնարհման բայերից սրանք տարբերվում են նրանով, որ վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայները կազմվում են անցյալի հիմքից։ Հրամայական եղանակի եզակին կազմվում է ներկայի հիմքից՝ ա վերջավորությամբ, իսկ հոգնակին՝ անցյալի հիմքից՝ էք վերջավորությամբ։

Երրորդ խոնարհման ենթարկվում են ենթաբարբառիս առաջին՝ ի խոնարհման միջմասնիկավոր բայերը, որոնք անորոշ դերբայում ստանում են նիլ վերջավորությունը, օրինակ՝ հէձնիլ, մէոնիլ, հաքնիլ և այլն։ Այս բայերի անցյալ կատարյալում, ինչպես և նույնի հիմքով կազմված հարակատար և վաղակատար դերբայներում ու հրամայական եղանակում ընկնում է ն ածանցը, իսկ անցյալ կատարյալը կազմվում է ոչ ցոյական՝ արմատական հիմքով։

Բացի նիլ վերջավորվող բառերից, նույն կերպ խոնարհվում է նաև տէնալ բայը, որը կազմվել է տեսանէլ ձևից՝ ս սուլական բաղաձայնի անկումով և ի լծորդությունը ա-ի փոխելով, որի փոփոխությունը, սակայն, խոնարհման փոփոխության պատճառ չի դարձել։

Չորրորդ խոնարհման ենթակա բայերը ան և էն սոսկածանցներն ունեն։ Անորոշ դերբայը վերջավորվում է անալ ածանցով, օրինակ՝ քրչանալ, փէդանալ, ունէնալ։

Այս բայաձևերի խոնարհումը ա խոնարհման պարզ բայերից տարբերվում է նրանով, որ անցյալ կատարյալում և նրա հիմքից կազմվող ձևերում ածանցի ն-ն փոխվում է ց-ի, օրինակ՝ զարմանալ, զարմացա, զարմացած, զարմացի, ունէնալ, ունէցա, ունէցի և այլն։

Անալ վերջավորվող բայերի անցյալ կատարյալը ցոյական է, իսկ վերջավորությունները՝ կրավորական։ Բացառություն է լվանալ բառը, որի վերջավորությունն անցյալ կատարյալում ներգործական է։

Օրինակ՝ լրվանալ, լրվացի, լրվացիր, լրվացիք և այլն։

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Օժանդակ բայի ժխտական ձևերը ենթաբարբառումս հետևյալներն են.

Ներկա		Անցյալ	
չէմ	չէնք	չիմ	չինք
չէս	չէք	չիր	չիք
չի	չէն	չէր	չին

Բաղադրյալ ժամանակների ժխտականը կազմվում է օժանդակ բայի ժխտական ձևերով, որոնք դրվում են դերբայից առաջ։ Օրինակ՝ նըստրմ էմ— չէմ նըստրմ, նըստրմ ի — չի նըստրմ, կրնացէլ էմ — չէմ կրնացէլ և այլն։ Բացառություն են հարակատար ժամանակները, որոնց ժխտականը կազմվելիս օժանդակ բայը դրվում է դերբայից հետո, ինչպես՝ կարմրրած ա, կարմրրած չի, կաղնած էմ, կաղնած չէմ և այլն։

Անցյալ կատարյալի, ինչպես և ըղձական եղանակի ժխտականը կազմվելիս չ մասնիկը դրվում է խոնարհված բայաձևերի սկզբում. օրինակ՝ կընացի — չըկընացի, կ'էրա — չըկ'էրա, էթամ — չէթամ, ուտէմ — չուտէմ և այլն։

Հարկադրական եղանակի ժխտականը կազմելիս, չ մասնիկը դրվում է կամ եղանակիչի, կամ չխոնարհվող բայի վրա, ինչպես՝ պրաի էթամ — չըպրտի էթամ, կամ՝ պրտի չէթամ, պրտի խօսամ — չըպրտի խօսամ, կամ՝ պրտի չրխօսամ։

Պայմանական եղանակի ժխտականը կազմվում է ժխտման դերբայի և օժանդակ բայի ժխտական ձևերի միջոցով՝ վերջինիս նախադաս գործածությամբ։ Օրինակ՝ կրնըստէմ — չէմ նըստի և այլն։

Հրամայականի ժխտականը կազմվում է մի արդելականի միջոցով, որը դրվում է դրական ձևերից առաջ. օրինակ՝ կըրի — մի՛ կըրի։

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Պատճառական բայերը կազմվում են բայահիմքին ավելացնելով ացրն. ցրն մասնիկները։ Ացրն մասնիկը ավելանում է ալ. իլ լծորդություն ունեցող բայերի հիմքին, ինչպես՝ խօսալ — խօսացրնիլ, ուտիլ — ուտացրնիլ, վալիլ — վազացրնիլ և այլն։

Ցրն մասնիկն ավելացվում է ն սոսկածանց ունեցող բայերի վրա, ինչպես՝ մէոնիլ — մէոցրնիլ, հասնիլ — հասցրնիլ, հաքնիլ — հաքցրնիլ և այլն։

Պատճառական բայերը մեծ մասամբ խոնարհվում են առաջին խոնարհման բայերի նման։

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Բայի կրավորական սեռը կազմվում է ներգործական սեռի բայերի վրա ավելացնելով վ ածանցը, որը միանում է ի խոնարհման բայերի ներկայի և ա խոնարհման բայերի անցյալի հիմքին, ինչպես՝ կօդրիլ — կոդըրվիլ, պատրիլ — պատրովիլ, կառթալ — կառթացվիլ և այլն։

Կրավորական բայերը հանդես են գալիս նաև անդրադարձ և փոխադարձ իմաստներով, ինչպես՝ սանդրրվիլ, լըվացվիլ և այլն։

ԲԱԶՄԱՊԱՏԿԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Բազմապատկական բայերը կազմվում են երկու ձևով՝ ա) բայարմատի կրկնությամբ, բ) օտ, ըշտ, որ, ատ, ըռտ ածանցների միջոցով։

Բայարմատի կրկնությամբ կազմվում են մի շարք բազմապատկական բայեր, որոնց արմատական ձայնավորները, բացի ը-ից, կրկնվելիս հնչյունափոխվում են. այսպես՝ կօռալ — կօռկըռալ, ծախիլ — ծախծըխիլ, ծամիլ — ծամծըմիլ և այլն։

Երեք բաղաձայնով կազմված բայարմատները կրկնվելիս կորցնում են վերջին բաղաձայնը. այսպես՝ բրոթիլ — բրոբըրոթիլ, լըխկալ — լըխլըխկալ և այլն։

Բացառություն է՝ դրնդալ — դրնգդրնգալ։

Բազմապատկական բայերը մեծ մասամբ կազմվում են օտ ածանցի միջոցով. ինչպես՝ թափօտէլ, խէխտօտէլ, ծալօտէլ և այլն։

Մնացած ածանցներն ունեն սահմանափակ գործածություն, դրանք արտահայտում են գործողությունը սաստկացնող իմաստ. օրինակ՝

ա) օր. դաղիլ — դաղդրդիլ, դաղդրդօրիլ։

բ) աստ. ճրդիլ — ճրդճրդիլ — ճրդճրդատիլ (հագուստը). օտ. ճրդիլ, ճրդճրդիլ — ճրդճրդօտիլ (ցախը), փուլ կալ — պրլպրլիլ — պրլպրլօտիլ։

МОРФОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КАНАКЕРСКОГО ГОВОРА

А. С. ХАЧАТРЯН

Резюме

В статье дается краткое описание морфологических особенностей канакерского говора араратского диалекта.

Установлено, что в указанном говоре множественное число существительных образуется при помощи окончаний *էր* (er), *նէր* (ner), *ք* (k').

Качественные прилагательные имеют три степени сравнения: положительную, сравнительную и превосходную. Канакерский говор не имеет порядковых числительных. Глаголы, выражающие многократное действие, образуются с помощью сочетания количественных числительных со словом *հէտ*. Неопределенная форма глагола имеет окончания *իլ*, *ալ*. Глагол имеет четыре формы спряжения. Глаголы первого спряжения имеют окончание *իլ*, второго—*ալ*, а глаголы третьего и четвертого спряжений являются внутрисуффиксальными.

Причинные глаголы образуются с помощью суффиксов *ացրն*, *ցրն*, страдательные глаголы суффикса *վ*, а глаголы, выражающие многократное действие, в большинстве случаев, при помощи суффикса, *օտ*.